պիսով տեղի է ունենում հասարակաց ճաշկերոյթը. ուտում, խմում են ուրախ և իրենց սիրելիների կենացը կոնծում։ Ճաշկերոյթի միջոցին սիրելի խնամիներն իրար յարգում են ու մեծարում՝ պէսպէս ուտելիքների և խմելիքների անուշահամ նմուշներով։ Ո՛վ որ նշանած հարս ունի, աղայի հայրը իւր հարսնացուի ծնողներին է յարգում՝ պէսպէս ուտելիքներով լիքը սկուտեղ *) ուղարկելով, իսկ հարսնացուի ծնողներն էլ իրենց խնամուն են յարգում ու մեծարում՝ իրենց սեղանի վրայի գտնուած նոյնպիսի բարիքներով։ Ուրախ ճաշկերոյթի ժամանակ յանկարծ հրացանի պայթիւն է լսուում, որին հետևում է երկրորդը, երրորդը... Տեսնում էք, որ գիւղական նոր պըսակուած երիտասարդներն ու նշանուած պատանիները՝ հէնց նստած տեղից նշան են դնում հաստաբուն կաղնու ամենաբարձր ճիւղին և ամենքը իրենց հրացանի փողն ուղղում են դէպի այդ ճիւղը։ Ոմանց գնդակը վրիպում է, սմանցը միայն նորածիլ ոստերն է թոցնում, ոմանցը՝ միայն կեղևն է խաղում ու անցնում, իսկ ոմանցը ուղիղ ճիւղին է դիպչում և մատաղահաս տերևներով ճիւղն օրօրուելով օդի մէջ, ընկնում է վայր, նոյն իսկ հացկերոյթի սփռոցի վրայ։ Այսպիսի քաջ և վարժ հրացանաձիգ երիտասարդներին ամեն կողմից ուխտաւորները ցնծագին աղաղակներով գովում ու փառաբանում են և դի-

---

*) Այսպիսի սկուտեղին տեղացիք ասում են խաՓչայ։